№ 162 ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒԼԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒԼԻՍԻ № 162

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է, որ այսօր, կիրակի, յուլիսի 26-ին, Վանքի աւագ-եկեղեցում պատարագից յետոյ ժամը 12-ին, կատարվելու է հոգեհանգիստ վաղաժամ մեռած

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ
ՍԱԹԵՆԻԿ ԱԴԱՄԵԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ:

492. 1—1

Այսօր, կիրակի, ամսիս 26-ին, ցերեկվայ ժամը 12-ին, պատարագից յետոյ, Վանքի մայր եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ մեր անմոռանալի ընկեր ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ

ՍԱԹԵՆԻԿ ԱԴԱՄԵԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ:

1—1 494. Թիֆլիսաբնակ հայ դերասաններ

Ստ. Տէր-Աւետիքեանը սրտի անհուն կսկիծով յայտնում է իր ընկերներին, բարեկամներին, ծանօթներին և համագիւղացիներին, որ ամսիս 23-ին կարճատև ու ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Գանձակում իր եղբայր

ՎԱԶԳԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ
ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆԸ

Թաղումը տեղի կունենայ Բանանց գիւղում ամսիս 26-ին: 495. 1—1

Եղիսաբէթ Աբրամեան Թիւնիբէկեանը սրտի կսկիծով յայտնում է իր ազգականներին և ծանօթներին իր թանկագին և անմոռանալի ամուսնու՝

ԵՍԱՅԻ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ ԹԻՒՆԻԲԷԿԵԱՆԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ յուլիսի 23-ին: Մարմնի յուղարկաւորութիւնը երեքշաբթի, յուլիսի 28-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Վելիամինովսկայա 12) դէպի Վանքի մայր եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 496. 2—1

ԿՈՉ

Անակնկալ վիթխարի նոր աղէտը, մօտ 150,000 նոր հայ փախստականների հոսանքը Հայաստանից հրամայողական պահանջ է դնում ամբողջ ռուսահայութեան վրա՝ անմիջական և արագ օգնութեան ձեռք կարկառելու աղէտահար եղբայրներին և քոյրերին:

Այսօր այդ 150,000 հայ փախստականները—ծեր և երեխայ, կին և աղջիկ—անօթի, մերկ, հիւանդ, ամառային այս շոգերին շարժվում են դէպի Էջմիածին և նրա շրջակայքը, ուր նրանց պէտք է տեղաւորել, սնունդ ու հագուստ տալ, խնամել, պատսպարել՝ մինչև որ հայութեան Աստուածը այցելութեան գայ նրանց և վերջ տայ նրանց տանջանքներին ու տառապանքներին...

Թէ Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովը, թէ Հայ Նպաստամատոյց Ընկերութիւնը և թէ միացած կազմակերպութիւնները աշխատում են ամէն կերպ օգնութիւն ցոյց տալ թշուառ փախստականներին:

Նպաստամատոյց Ընկերութեան գործակալները ներկայումս գտնվում են Իգդիրում և Էջմիածնում, և նրանց կարգադրված է աջակցելով փախստականներին՝ օգնել գործի ընդհանուր լիազօր Խորէն եպիսկոպոսին՝ փախստականներին տեղաւորելու գործողութիւններում, բանալ ճաշարաններ որոշ շրջաններում և խնամել փախստականներին: Սակայն որովհետև կարօտեալների թիւը տասնեակ և նոյնիսկ հարիւր հազարների է հասնում, իսկ Նպաստամատոյցի միջոցները շատ սուղ են այդպիսի ահռելի կարիքին իր ոյժերի չափով բաւարարութիւն տալու համար, ուստի Ընկերութեանս վարչութիւնը կոչ է անում բովանդակ հայութեանը՝ համազգային փորձութեան այս դառն օրերում արձագանք տալ և փութալ իրանց նուէրներով մեղմել տարագիր փախստականների սոսկալի վիճակը:

Մեր ժամանակաւոր խնամքի մէջ, մեր քրիստոնէական ու եղբայրական պարտականութեան կատարման մէջ թող վառ մնայ ճակատագրից հալածված Թիւրքահայ փախստականների այն յոյսը, թէ Նախախնամութեան կամքով կը բացվի և իրանց արշալոյսը և նրանք վերստին կը դիմեն դէպի իրանց մայր երկիրը՝ նոր շինարար կեանք ստեղծելու իրանց սիրասուն հողի այժմեան աւերակների վրա...

Նպաստամատոյց Ընկերութեան վարչութիւնը խնդրում է նուէրները ուղարկել այս հասցէով. Ред. газ. «Мшакъ», Նպաստամատոյցին յանձնելու համար:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(օ. մ.) առ. 493. 5—1

„ԱՐԱՄԱԶԴ" ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՎ ՊԱՀՎՈՂ ԶԱՆԳԵԶՈՒՐ ԳԱՒԱՌԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

համար հարկաւոր են միջնակարգ կրթութիւն ունեցող ուսուցիչներ: Ցանկացողները մանրամասն պայմանների մասին թող դիմեն հետևեալ հասցէով. Баку, А. Г. Вачьянцу. Романовскій пр. д. Арафелова: Դիմումի հետ պիտի ներկայացնել նաև ուսման վկայական և կամ նրա վաւերացրած պատճէնը:

առ. (օ.մ.) 484. 3—3

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչևսկայա 13, տելէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամէն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելօզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Գ. Շահպարոնեանց
(չ.ու կ.) առ 970. 100—68

Ախալցխայի հայոց Կարապետեան տղայոց աւանդվող ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ համար հարկաւոր է մասնագիտական պատրաստութեամբ

ՈՒՍՈՒՑԻՉ:

Տնտեսականապէս և գործնականապէս աւանդվում են այգեգործութիւն, պտղաբուծութիւն, բանջարաբուծութիւն (ունի նաև ջերմոց) և մեղուաբուծութիւն: Պայմանների մասին դիմել հոգաբարձութեան:
առ. (19,25) 458. 3—3

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
„ՏԱՐԱԶԻ"
բաժանորդագրութիւնը, որ հրատարակվում է շքեղ, բազմաբովանդակ և հայութեան մէջ չունի մրցակից: Նոր գրվողները կը ստանան № №-ը սկսած յունվարից:
առ. 13. 2—1

ՊԵՏ. ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Յուլիսի 19-ին և 20-ին Պետական Դումայի նիստերը դարձան պատմական այն կարևոր յայտարարութիւններով, առաջարկութիւններով, որոնք արվեցին կառավարութեան ներկայացուցիչների և պատգամաւորների կողմից.

Արտասանված բոլոր ճառերը ցոյց տուեցին, որ չը նայելով կրած անաջողութիւններին՝ ոչ ոք չէ յուսահատվել, ոչ ոք կասկած չունի վերջնական յաղթութեան մասին և ամենքը պնդում են, որ ներկայ պատերազմը, չը նայած իր սարսափելի աղէտներին, իր հետ կը բերի աւելի պայծառ, լուսաւոր և ազատ ապագայ Ռուսաստանի և նրա բաղկացուցիչ տարրերի՝ ազգութիւնների համար.

Կառավարութիւնը, զինուորական մինիստր Պոլիվանովի բերանով, խոստովանեց, որ մեր թշնամին, Գերմանիան, զօրեղ թշնամի է. այդ Գերմանիան ամբողջ 43 տարի պատրաստվում էր սիստեմատիկաբար՝ պատերազմի համար և այդ պատրաստութեանը մասնակցում էին ոչ միայն զինուորական վարչութիւնները, այլ ամբողջ երկիրը ի դէմս նրա հոգևոր, գիտական, արդիւնաբերական գործունէութեան, և այդ է պատճառը, որ Գերմանիայի այդ պատրաստութիւնը այնքան բարձր հանդիսացաւ և նա տեխնիկական միջոցների կողմից գերազանցութիւն ցոյց տուեց մեզ վրա.

Սկզբում աջողութիւնը մեր կողմն էր. այժմ, ժամանակաւորապէս, աջողութիւնը Գերմանիայի կողմն է. և սակայն չը նայելով այդ ամենին, չը նայելով այն հանգամանքին, որ, ռազմագիտական պատճառներով, պէտք է թողնել և Վարշավան ու Լեհաստանի մի մասը թշնամուն, բայց այդ ամենը չէ կարող և չը պէտք է որևէ լքումն կամ յուսահատութիւն պատճառէ, որովհետև պատմութիւնը այնտեղ կեցած է ապացուցանելու, որ Ռուսաստանը աւելի վատթար օրեր է տեսել, որ Նապոլէոնը նոյն իսկ Մոսկվան գրաւեց, որ Թաթար-մոնղոլները Ռուսաստանի սիրտը մտան և սակայն ռուս ժողովուրդը վերջ ի վերջոյ յաղթեց նրանց, դուրս քշեց. Այսօր, թէ կառավարութիւնը, թէ ժողովրդական ներկայացուցիչները միաբան և համերաշխ են այն խորին գիտակցութեան մէջ, թէ պատերազմը պէտք է հասցնել մինչև թշնամու կատարեալ պարտութիւնը և մեր վերջնական յաղթանակը: Եւ ամենքը չեն ծածկում, որ պատերազմը երկարատև է լինելու, դժնդակ, որ պէտք է զինաւորվել համբերութեամբ.

Ֆինանսների մինիստրի ճառից երևաց, որ պատերազմական գործողութիւնները սկսելու օրից մինչև այս յուլիս ամսի 1-ը՝ ծախսվել է 5456 միլիոն ռուբլի, օրական 15,7 միլիոն ռուբլի, իսկ այսուհետև օրական ծախսվելու է ոչ պակաս քան 19 միլիոն ռուբլի: Սակայն կառավարութիւնը դժուարութիւններ չէ կրում այս չափազանց մեծ ծախքերը հոգալու համար, կատարելով ֆինանսական զանազան կոմբինացիաներ:

Ուշադրութեան արժանի է, որ մինիստր-նախագահը Թագաւոր Կայսրի անունով յայտարարեց, թէ Լեհաստանին տրվելու է ազգային-կուլտուրական աւտօնոմիա, պատերազմից և յաղթութիւնից յետոյ: Հայերի մասին իր ճառի մէջ յիշեց արտաքին գործերի մինիստր Սազօնովը՝ ասելով թէ «Հայերն ենթարկվում են անլուր հալածանքների, որոնք, սակայն չեն ընկճում նրանց հոգին և հայ կամաւորները քաջաբար կռւում են մեզ հետ միասին իրանց ճնշողների դէմ»: Ապա ռուս պատգամաւորներից միայն կոմս Բոբրինսկին յիշեց հայերին, ասելով. «Յիշենք հայ մարտիրոս կամաւորներին, որոնք կռւում են մեր արծիւների հովանու ներքոյ Մուշի և Վանի բարձրութիւնների վրա և պայքարում են մեզ հետ ընդհանուր թշնամու դէմ»: Սակայն ոչ մինիստր Սազօնովը, ոչ պատգամաւոր Բոբրինսկին, որի ճառը ահագին տպաւորութիւն գործեց իր համարձակութեամբ շօշափած հարցերի մասին, ոչ մի խօսք չասացին, թէ ինչ է սպասում Հայաստանին: Խօսեց և հայ ժողովրդի ներկայացուցիչ Մ. Պապաջանեանը, որի ճառի բովանդակութեան ծանօթ են արդէն մեր ընթերցողները, որը թէև շօշափեց տեղական իշխանութիւնների դէպի հայերն ունեցած վերաբերմունքի հարցը, բայց չը կատարեց այդ աւելի ազդուօրէն և անկեղծ կերպով: Եւ մենք տրամադիր ենք կարծելու, որ նա այդ չարեց բաւականաչափ նիւթեր և փաստեր իր ձեռքի տակ չունենալու պատճառով, իսկ այդ բանի մէջ, անկասկած, մեղաւոր է Թիֆլիսում բազմած Հայկական Բիւրօն, որի ապիկարութիւնը աւելի և աւելի աչքի է ընկնում, ցորչափ ծաւալվում են գործողութիւնները Թիւրքաց Հայաստանում:

Պատգամաւորներից ոմանք, ինչպէս Բոբրինսկին, Միլիւկօվը, Չխէիձէն, Կերենսկին և այլք, խիստ լեզու գործածեցին կառավարութեան դէմ, պահանջեցին նոյնիսկ պատասխանատու մինիստրութիւն, բայց ամենքը լցված էին խորին յոյսով և հաւատով վերջնական յաղթանակի մասին, ամենքը վառված են կամքով, տոկունութեամբ և յամառութեամբ՝ առաջ վարել պատերազմը, դիմադրել յանդուգն, զօրեղ, բայց անբարոյական միջոցներով պատերազմող թշնամու դէմ:

Իսկ մենք հայերս, որ կազմում ենք Մեծին Ռուսաստանի մի փոքրիկ մասը, ի՞նչ պէտք է անենք: Ճիշդ է, մեր Թիւրքահայ եղբայրների դրութիւնը յուսահատական է, որովհետև ներկայ պատերազմը բերեց նրանց և դրեց ամբողջովին բնաջինջ լինելու վտանգի առաջ, և այդ վտանգը, որ մեծ չափերով կատարված է, ձգում է մեզ խորին յուսահատութեան մէջ, բայց հէնց այն հանգամանքը, որ մենք, ռուսահայերս, գոնէ պէտք է վրէժխնդիր լինենք մեր Թիւրքահայ եղբայրների դահիճ՝ Թիւրքական կառավարութիւնից, պէտք է ստիպէ մեզ նոյն յամառութեամբ և տոկունութեամբ մասնակցել ռուսական զօրքերի շարքում և Գերմանիայի և Թիւրքիայի դէմ մղվող պատերազմին: Գալով մեր կամաւորական խմբերին, յարգանքի արժանաւոր հարկը տալով այն հայ երիտասարդներին և պատանիներին, որոնք յանուն գաղափարի, իդէալի նետվել են պատերազմի դաշտը, զոհում են իրանց կեանքը, գալով նոյնիսկ հեռաւոր Ամերիկայից, մենք կամաւորական խմբերի ապագայ գործունէութիւնը այլ կերպ փոխելու և կազմակերպելու ծրագրին ենք կողմնակից, որ կը բացատրենք մի այլ անգամ:

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Նպաստամատոյց Ընկերութեան լիազօր Դր. Վարդանեանը հեռագրում է մեզ Էջմիածնից, յուլիսի 24-ին.

Բուլանըխի, Ալաշկերտի և Մ․․ի փախստականները, մօտ 50,000 հոգի, տեղաւորվել են Իգդիրի շրջանում և ուղղվում են դէպի Էջմիածին: Վանի շրջանի փախստականները սպասվում են Իգդիրում երկու օրից յետոյ մօտ 100,000 հոգի: Ընկերութիւնների ներկայացուցիչները ձեռք են առնում ամէն տեսակ միջոցներ. կարիքը մեծ է. օգնեցէք շուտով:

—

Իգդիր, 24 յուլիսի 9 ժ. 30 ր. գիշերվայ

Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով եկայ Իգդիր՝ փախստականներին օգնութիւն հասցնելու գործը կարգադրելու, սանիտարական-սննդական կայաններ հաստատելու, փախստականներին տեղաւորելու և նրանց կերակրելու համար: Անվերջ շարքերով գալիս են մօտ 60,000 փախստականներ Մասունի վրայով. Այսօր երևաց հեղեղի սկիզբը. Փախստականների ընդհանուր թիւն է 150 հազար: Փախստի տեսարանը սոսկալի է: Իգդիրում, տեղական կոմիտէտը Եղբայրական Օգնութեան սանիտարական-սննդարար խմբերի հետ միասին իմ անձնական հսկողութեան ներքոյ նրանց կարևոր օգնութիւն է ցոյց տալիս: Կազմակերպված են սանիտարական-սննդարական խմբեր երեքը Իգդիրում, մէկը Մարգարայում, մէկը Էջմիածնում և մէկն էլ Զինզլիի վայրում: Կարիքը ահագին է, պահանջվում է հրամայողաբար շուտափոյթ և ընդարձակ օգնութիւն: Հրաւիրում եմ սրտացաւ հայերին օգնել ճակատագրից հալածվող թշուառներին:

Խորէն եպիսկոպոս

—

Հին-Նախիջևանից՝ յաջորդ Սիոն վարդապետը հեռագրում է մեզ յուլիսի 23-ին.

Գուլառապետի հետ միասին սպասում ենք բազմաթիւ փախստականների. խնդրեմ յայտնել անմիջական կարգադրութիւն անել կարիքների համար. կոպէկ չը կայ.

—

Այս հեռագիրները ցոյց են տալիս, որ բացի Մանազկերտի կողմից եկած փախստականներից, որոնց մասին «Մշակի» մէջ խօսվեց մի քանի օր առաջ, այժմ Վանի կողմից նոր փախստականներ են գալիս. դրանց մի մասը, ինչպէս երևում է, Պարսկաստանի (Մակուի) վրայով:

Եւ ուրեմն Վանի շրջանն էլ դատարկվում է հայութիւնից: Բոլոր փախստականները, ինչպէս յայտնեցինք, այժմ թւով մօտ 150,000, տեղաւորվելու են Էջմիածնի շրջակայքում, Ալեքսանդրօպոլի, Շիրակի, Նոր-Բայազէտի, Ապարանի շրջաններում: Եթէ առաջ խօսքը միայն 50,000 փախստականների մասին էր, այժմ արդէն 150,000 և գուցէ վաղը 200,000-ի մասին լինի:

Անհրաժեշտ է անմիջապէս օգնութիւն հասցնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի նախագահած Գլխաւոր Կարգ. Յանձնաժողովը այժմ օգնութեան գործի ղեկավարն է: Ընդհանուր լիազօր Խորէն եպիսկոպոսի հետ գործում են և ընկերութիւնների ներկայացուցիչները, ինչպէս և Նպաստամատոյց Ընկերութեան ներկայացուցիչը.

Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Էջմիածնի Գլխ. Ցանձնաժողովի կոչը հետզհետէ արձագանք է գտնում։ Արդէն Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը փոխադրեց հեռագրով Վեհ. Կաթողիկոսին 5000 ր.։ Ինչպէս լսում ենք, միւս բանկերն եւս ուղարկելու են։ Վաճառականներն եւս հանգանակութիւն են անում։ Երէկ պ. Ռոստոմ Մարտիրոսեանը փոխադրեց Կաթողիկոսին իր նուէրը՝ 1000 ր.։ Անկասկած, վաճառականութեան աւագ Միլեանն առանձին փութկոտութեամբ կը հաւաքէ գումարներ և կը հասցնէ Կաթողիկոսին։

—

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը որոշել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղարկել 1000 ր. յօգուտ փախստականների, և կազմակերպել մի ներկայացում, որից ստացված մուտքը նոյնպէս ուղարկել։

Բժշկապետ Բ. Նաւասարդեանը նոյն նպատակով յանձնեց խմբագրութեանս 30 ր.։

—

Կրկնում ենք, այս բոպէիս ամենահրամայողական պահանջը՝ փախստականներին օգնելու պահանջն է։

—

Երէկ Կարսի գնացքով Թիֆլիս եկան մի խումբ թիւրքահայ փախստականներ՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Յուլիսի 21-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր։ Մեր մոտորային նաւերից մինը Վիցէի մօտ գնդակացիրային կրակով ցիրուցան արաւ հակառակորդի զօրամասերին։

Օլթիի ուղղութեամբ մենք պաշտպանում ենք նախօրեակին մեր գրաւած թիւրքական դիրքերը և վանեցինք թիւրքաց հետիոտն զօրախմբերի՝ Հէյ-դաղ լեռան դէմ գործած յարձակումը նրանց համար խոշոր կորուստներով։

Սարըղամըշի ուղղութեամբ մենք նոյնպէս պաշտպանում ենք նախօրեակին գրաւած թիւրքական դիրքերը և օրվայ ընթացքում տեղի էր ունենում հրային կռիւ։

Մնացած զօրաճակատում ռազմական ընդհարումներ չեղան։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ԱԹԷՆՔ.—Միտիլէն կղզուց տեղեկացնում են, որ Դարդանէլի ռմբակոծութիւնը և առաջապահ հետիոտն զօրամասերի կռիւները շարունակվում են։

Լէմնոս կղզում դաշնակիցները յիրաւի կենտրոնացրել են 9000 զինուոր։ Դաշնակիցները Թերակղզին են փոխադրում լայնաբերան թնդանօթներ։

Գերմանական մի սուզանաւ դուրս ելաւ Նեղուցից Այվալըքի ծոցում իր պաշարը լրացնելու համար։ Դաշնակից նաւատորմը կտրեց սուզանաւի ճանապարհը, դնելով ծոցի երկու մուտքի երկարութեամբ խութեր և ջրասուզելով մի քանի մեծ նաւեր։ Այդպիսով յոյս կայ ոչնչացնել գերմանական սուզանաւը։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Անգլիական հասարակական կարծիքը միանգամայն լաւատես է Գալիպօլի թերակղզում կատարվող դէպքերի աջող վախճանի վերաբերութեամբ։ Դաշնակից զօրքերը անըսպառ եռանդով և նաւատորմի անգնահատելի աջակցութեամբ գործում են աջողութեամբ։ Թիւրքերի կորուստներն անհաշիւ են, և այդ հանգամանքը յուսահատութեան մէջ է ձգում թիւրք ղեկավարներին։ Այնքան էլ լաւատես չեն գերմանացիք, որոնք, սակայն, արտաքուստ ոգևորում են երիտասարդ թիւրքերին։

◆ Կ. Պօլսից բոլոր աչքի ընկնող հայ գործիչները և հարուստները աքսորված են Փոքր Ասիա, ուր և բանտարկված է նրանց մեծ մասը։ Կ. Պօլսի հայկական բոլոր հաստատութիւնների գոյքը գրաւված է թիւրքաց կառավարութիւնից։ Հայ կեանքը մեռել է այնտեղ բառիս բուն նշանակութեամբ։

◆ Արաբական պարագլուխների մէջ ներկայումս տիրում է երկու հոսանք. մէկը թեքված է միանալու թիւրքերի կոչին և օգնելու նրանց իրանց զօրագնդերով, ինչպէս արդէն տեղի է ունենում որոշ տեղերում. իսկ միւս մասը, լաւ գիտենալով երիտասարդ թիւրքերի սին խոստումների արժէքը և չը խաբվելով աւտոնոմիայի յուսադրութիւններից, կողմնակից է ոչ միայն չէզոք մնալու, այլ անգամ պահանջում է ծածանել ապստամբութեան դրօշակը և արաբական անկախութիւնը ձեռք բերել երիտասարդ-թիւրքերից զէնքի ոյժով։

◆ Աթէնքից հեռագրում են, որ թիւրք-բոլգարական համաձայնութեան ոյժով՝ Դիմոտիկա - Մուստաֆա-փաշա ուղղութեամբ գտնվող բոլոր մաքսատները և թիւրքական կայարանները յանձնված են բոլգարներին։

◆ Այժմ արդէն կասկած չէ մնում, որ Բոլգարիան դարձել է Թիւրքիայի մտերիմ դաշնակիցը։ Վերջինս իր զիջումները արաւ Գերմանիայի պահանջով, որ իր հերթին իր վրա վերցրեց բոլգարական փոխառութեան խոշոր մասը ի տրիտուր Բոլգարիայի մատուցած մեծ ծառայութեանը՝ թէ Թիւրքիային և թէ Գերմանիային։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Դվինսկի և Նեմանի միջև էական փոփոխութիւններ չը կան։ Յուլիսի 23-ին գերմանացիք, որոնք յարձակումներ էին գործում մեր վրա Պիսսա գետի մօտ, մեզանից ցիրուցան եղան։

Նարեւի ձախ ափում լոյս յուլ. 23 ի գիշերը և հետեւեալ ամբողջ օրը շարունակվում էր շատ յամառ կռիւ Ռոժանի մօտից մինչև Օստրօվա։ Մեր մի շարք կտրուկ հակայարձակումները կանգնեցրին թշնամուն յիշեալ գետի մօտից սկսած 10 վերստ տարածվող զօրաճակատի վրա։ Մենք գերեցինք մի քանի հարիւր մարդ։

Տաք հրային կռիւը շարունակվում է։

Միջին Վիսլայի զօրաճակատում նրանից յետոյ, երբ մեր զօրքերը ետ քաշվեցին դէպի գետի աջ ափը, հանգիստ է։ Վարշաւան թողնված է, որպէսզի նա չենթարկվի նոր ռմբակոծութեան։ Միայն Մացեէվիցէ շրջանում թշնամու զօրքերն անաջող փորձեր էին անում ընդլայնել իրանց գրաւած շրջանը։

Վիսլայի և Բուգի միջև անհամեմատ յամառ էին յուլիսի 23-ի կռիւները Տրաւնիկա-Վլոդավա խճուղուց դէպի արեւելք, ուր թշնամին կենտրոնացրել էր իր արտիլերիայի ամբողջ կրակը, որը և ստիպեց մեր զօրքերին քաշվել մի փոքր դէպի հիւսիս։

Բուգի աջ ափում, Զոլոտայա Լիպայի և Դնեստրի վրա փոփոխութիւն չը կայ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում, Սուշէի շուրջ երէկ գիշեր տեղի էին ունենում բաւական ուժեղ թնդանօթային կռիւներ ձեռքի ռումբերով հանդերձ։ Նոյնպէս ուժեղ թնդանօթաձգութիւն տեղի էր ունենում Տրանսիլվալի մօտ, Բալի շուրջը՝ Էն գետի հովտում։ Արգոններում գիշերը հրացանաձգութիւն էր և կռիւներ ռումբերով՝ խրամատների մէջ. մի քանի անգամ մասնակցեց արտիլերիան։ Մաասի աջ ափում մենք հեշտութեամբ վանեցինք թշնամու յարձակումները։ Վօգէզներում եռանդուն թնդանօթաձգութիւն է մեր խրամատների դէմ՝ Լինգէնկօպֆի մօտ։ Լոյս յուլիսի 22-ի գիշերը գերմանացիք գործեցին չափազանց ուժեղ յարձակում, բայց մենք պահեցինք մեր բոլոր դիրքերը, բացի Լէնժ լեռան մօտի խրամատների մի մասից։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական երեկոյեան հաղորդագրութիւն.

Զօրաճակատի արեւմտեան մասում միջին ոյժով թնդանօթաձգութիւն էր։ Արգոններում շարունակվեցին կռիւները ձեռքի ռումբերով։ Ապրեմօնի անտառում կատաղի թնդանօթաձգութիւն էր։ Վօգէզներում տեղի էին ունենում կատաղի կռիւներ մասամբ Ֆէխտի հովտում, մանաւանդ Շրացմէնլէ լեռնանցքում, ուր թշնամին, տիրելով մեր զինապահեստներից մէկին, իսկոյն վանվեց այնտեղից մեր հակայարձակումով։ Մեր կրակը խոշոր կորուստներ պատճառեց թշնամուն։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից յայտնում են յուլիսի 23-ից. «Կորդեվոլէ հովտում մենք շարունակեցինք առաջանալը։ Թշնամու ուժեղ կրակի տակ մեր հետիոտն զօրագնդերը գրոհ տալով գրաւեցին մի ամուր դիրք Կոլդիլանօյում։ Կարսոյում թշնամին մեր կենտրոնի և ձախ զօրաթևի առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով երէկ ձեռնարկեց կատաղի յարձակման Կապուչչիօ անտառի ուղղութեամբ, բայց մեր զօրքերն աջողութեամբ դիմադրեցին. յետոյ իրանց հերթին գործեցին խիզախ յարձակում, գրոհ տալով ձեռք ձգեցին մի ամրութիւն։ Ուշ երեկոյեան թշնամին փորձեց նորից յարձակման դիմել մեր զօրագծի դէմ, բայց այս անգամ էլ ոչ մի հետևանքի նա չը հասաւ»։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ՆԻՇ.—Սերբիական «Պրեսս-Բիւրօն» հաղորդում է.

Յուլիսի 21-ին ցերեկով մեր արտիլերիան ցրեց թշնամուն, որ դիրքեր էր բռնել Օրշավայի կայարանի մօտ։ Միևնոյն օրը երեկոյեան Տէկիայի մօտ սկսվեց թնդանօթաձգութիւն երկու կողմից, բայց շուտով մերը գերազանցեց։ Լոյս յուլ. 22-ի գիշերը թշնամին Սավայի ափերի մի քանի տեղում կրակ բացեց, որպէսզի նրա պաշտպանութեամբ դիրքեր բռնի, բայց մեր թնդանօթային կրակը արգելք եղաւ թշնամու աշխատանքներին։

Յուլիսի 20-ի առաւօտեան Բէլգրադի դիրքերի վրայի մեր մարտկոցներից մէկը կռիւ սկսեց թշնամու մարտկոցների հետ, որի ժամանակ մեր օդագնացներից մինն աջողութեամբ ղեկավարում էր մեր կրակը։ Թնդանօթաձգութեան հետևանքն այն եղաւ, որ թշնամու մարտկոցները լռեցին։ Թշնամու երկու թնդանօթ 56 ռումբ զուր տեղը արձակեցին մեր աէրօպլանի վրա։ Մեր աէրօպլաններից մի քանիսն աջողութեամբ 26 ռումբ նետեցին Բավանիշտայում թշնամու աէրօդրոմի վրա։ Հետևեալ օրը մեր զօրամասերից մէկն անցաւ Սավան՝ Ցինգալիա փոքրիկ կղզու մօտ, կատարեց հետախուզական աշխատանքներ և վերադարձաւ, բռնելով մի քանի գերի։

ԱՒՍՏՐՕ-ՉԵՌՆՕԳՕՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ՑԵՏԻՆԻԷ.—Յուլիսի 18-ին թշնամին անհետեւանք ռմբակոծութեան ենթարկեց Գրախովի մօտի չեռնօգօրական զօրաճակատը։ Թշնամու մի աէրօպլան Գրախովի վրա նետեց 4 ռումբ։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ.—Գերմանական կառավարութիւնը պաշտօնապէս ընդունեց, որ նորվեգիական «Մինէրվա» շոգենաւը ընկղմվել է գերմանական սուզանաւից, ցաւակցութիւն յայտնեց և հատուցանելու է վնասները։

ԼՕՆԴՕՆ.—Լլօյդին հաղորդում են, որ անգլիական «Կոստէրօ» շոգենաւը ջրասուզված է։ Նաւապետը և 21 նաւաստի ազատվել են, մինը խեղդվել է։

«Կօրտիօ» շոգենաւը ջրասուզվել է. Նաւաստիներն ազատվել են։ Մինչև յուլիսի 22-ը մի շաբաթվայ ընթացքում ջրասուզվել են սուզանաւերից 6 բրիտանական առևտրական, 10 ձկնորսանաւ։

ՔԱՌԵԱԿ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 յուլիսի

ԱԹԷՆՔ.—(Ուշացած)։ Երէկ երեկոյեան քառեակ համաձայնութեան դեսպանները միասին այցելեցին Գունարիսին, մինիստրների խորհրդի նախագահին, արտաքին գործերի մինիստրի ժամանակաւոր պաշտօնակատարին։ Մինիստրների այցելութիւնից յետոյ Գունարիսը մեկնեց Տատոյ՝ թագաւորին զեկուցանելու համար։

Կարծում են, որ այդ այցելութիւնը վերաբերում է բալկանեան գործերի կարգաւորմանը և բալկանեան պետութիւնների հնարաւոր աջակցութեանը դաշնակիցների ռազմական գործողութիւններին։

Գունարիսը Աթէնք վերադառնալուց յետոյ երկար ժամանակ աշխատում էր արտաքին գործերի մինիստրութեան առանձին ատեանների կառավարիչների հետ։

Դիւանագիտական աղբիւրներից բղխող հեռագրերից յետոյ երեկոյեան լրագիրները արտատպեցին այն վերջնագրի պատճէնը, որ քառեակ համաձայնութեան ներկայացուցիչները յանձնել են Սօֆիայի կառավարութեանը, նաև կառավարութեան և Գունարիսի այն յայտարարութիւնը՝ թէ Բոլգարիան քառեակ համաձայնութեան կողմից հրաւիրվել է աջակցութեան։ Նրան առաջարկվել են հետևեալ զիջումները. Նախ 1912 թւին Բոլգարիայի և Սերբիայի միջև կնքված դաշնակցական պայմանագիրը կը գործադրվի, այսինքն Բոլգարիան կը ստանայ ամբողջ Հիւսիսային Մակեդոնիան. երկրորդ՝ Յունաստանը կը զիջէ Բոլգարիային Կավալայի այն կողմն ընկած հողերը։ Այդ տերրիտորիալ զիջումները տեղի կունենան պատերազմը վերջանալուց յետոյ, հէնց որ Սերբիան կը ստանայ վարձահատուցումն այլ տեղերում, իսկ Յունաստանը՝ Փոքր Ասիայում։

Երեկոյեան մամուլը առանց ուղղութեան տարբերութեան քննադատում է քառեակ համաձայնութեան վերջնագիրը և խօսում է տերրիտորիալ զիջումների դէմ։

Ցերեկվայ լրագիրները միանգամայն անգոհունակ են քառեակ համաձայնութեան ա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ

(Սիրավէպ)

VIII

Երեք օր է, որ Վահանը և Սուրէնը համարեա իրար չեն տեսնում։ Երբ Վահանը գիշերը շատ ուշ էր տուն վերադառնում, Սուրէնը քնած էր լինում։ Իսկ առաւօտները արագ ոտի վրա մի բաժակ թէյ էր խմում և նորից շտապում դուրս գալ։ Նա ամբողջապէս տարված էր իր աշխատանքով։ Եւ կարծես միանգամայն մոռացել էր իր նոր ծանօթներին, որոնք այնքան հետաքրքրվում էին նրանով և որտեղ Սուրէնին հանդիպում էին, նրանից էին հարցնում, թէ ինչ է պատահել, հո հիւանդ չէ։

Ամենից անտարբերը օր. Ժէնիան էր երեւում, որի համար կարծես միևնոյնն է՝ կը լինի նա իրանց հետ թէ չէ։

Սուրէնը տնից շատ քիչ էր դուրս գալիս։ Նա մի քանի անգամ հեռուից տեսաւ օր. Ժէնիային, բայց չը մօտեցաւ։ Օրերը անցնում էին տաղտկալի, միօրինակ։ Նա տանջվում էր անորոշութեան մէջ, բայց վախենում էր ասել, վախենում էր, որ մի անգամից կը փլվեն իր անուրջները։ Երբեմն նա որոշում էր, ինչ ուզում է թող լինի՝ գնալ ու ասել, բայց կէս ճանապարհին զղջում էր ու վերադառնում, աւելի լաւ համարելով ոչինչ չասել, խեղդել այդ զգացմունքը, թողնել ու հեռանալ այդ տեղից։

Այդ օրը նա նստած պատշգամբում՝ արդէն որոշեց, որ վերջացնէ պօէմը և միւս օրն իսկ ճանապարհվում է քաղաք։

— Բարև ձեզ, պ. Սուրէն։

Նա շփոթված տեղի կանգնեց, աչքերին չուզեց հաւատալ, տեսնելով փողոցում օր. Ժէնիային գլխաբաց, յենված հովանոցի վրա, մի ժպիտ դէմքին։ Սիրտը սկսեց արագ բաբախել։ Նա մի քանի վայրկեան ոչ խօսել էր կարողանում, ոչ տեղից շարժվել։

— Հիւր չէք ուզում։

— Ես շատ ուրախ եմ։

— Ես ձեզ չե՞մ խանգարի։

— Ինչ էք ասում, խնդրեմ։

— Մենա՞կ էք...

— Ես միշտ մենակ եմ, խնդրում եմ վեր բարձրացէք։

Օրիորդը մի քանի քայլ արեց դէպի բակի դուռն ու էլի կանգ առաւ։

Գիտէք ինչ, պ. Սուրէն, աւելի լաւ է իջէք և խճուղով վեր բարձրանանք, հրաշալի երեկոյ է. գուցէ դուք զբաղված էք և ես ձեզ խանգարեցի։

— Ո՛չ, ո՛չ. ինչ էք ասում, ես իսկոյն։

Նա ներս մտաւ սենեակ, արագ վերցրեց գլխարկն ու վերարկուն և ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս դուրս եկաւ փողոց։

— Բարև, չէք տխրում մենակ,—մեկնելով ձեռքը ժպտալով ասաց աղջիկը։

— Ես հազիւ եմ ուրախ լինում, սովոր եմ տխրութեան. մենակութեան այնքան ընտելացել եմ, որ չեմ էլ հասկանում, թէ ուրիշ ինչ կերպ կարող եմ լինել...

— Դէ գնանք...

Նոր էին կամուրջն անցել, երբ օրիորդը կանգ առաւ և ետ նայեց, կարծես մի բանի սպասելով։

— Դուք յոգնա՞ծ էք։

— Ոչ, թոյլ տուէք ձեր թեւը մտնել, զառիվայրը ինձ շատ յոգնեցնում է։

Սուրէնը կարմրեց, շփոթվեց և չը գիտէր ո՞ր թեւը առաջարկէր։ Բայց օրիորդը առանց սպասելու թոյլտուութեան՝ մտաւ նրա թեւը։

Սուրէնը առաջին անգամն էր այդքան մօտ զգում նրա ներկայութիւնը։ Բարակ ամառային բլուզի միջից, նա զգում էր նրա ջերմութիւնը, և կարծես էլեքտրական հոսանքներ էին անցնում ամբողջ մարմնով։ Մի վայրկեան նա իրան կորցրեց. նրան թւում էր, թէ ահա կընկնի գետին ուշաթափ. սիրտը հրճուանքից նուաղում էր. նա երջանկութիւնից ուզում էր ծիծաղել, բարձրաձայն լալ, գոռալ...

— Ձեզ համար դժուար կը լինի քարշ տալ ինձ,—հասաւ Սուրէնի լսողութեանը օրիորդի մեղմ ձայնը, ինչպէս հեռուից զեփիւռի թևերով հասնող երաժշտութեան ձայն։

Նա ուզեց ասել, որ պատրաստ է ձեռքերի վրա բարձրացրած մինչև սարի գագաթը տանել, թէկուզ գագաթին ուժասպառ ու շնչասպառ հոգին աւանդել։ Շատ բան անցաւ նրա գլխով, բայց նա և ոչ մէկը չը համարձակվեց ասել...

— Ինձ միշտ պ. Վահանն էր օգնում այդպիսի դէպքերում... Նա այնպէս ուժեղ է։ Այսօր դուք պէտք է փոխարինէք ձեր ընկերոջը՝ այս ծանր բեռը տանելու։

— Ես նախանձում եմ, որ միշտ նրան է վիճակվում այդ բաղդը։

— Օհօ՜... դուք հաճոյախօսութիւններ էլ գիտէք ասել... բայց միշտ լուռ էք... Դէ խօսեցէք, ես ձեզ լսում եմ։

— Ի՞նչ ասեմ։

— Ինչ կուզէք... Վերջացրիք ձեր պօէմը։

— Դեռ ոչ։

— Ծուլութի՞ւն էք անում։

— Ոչ, ոչ...

— Պ. Վահանը ինձ հետ շատ է խօսել այդ պօէմի մասին։ Նա ենթադրում է, որ տաղանդաւոր բան պիտի դուրս գայ։

— Նա երևի ծաղրել է։ Այդ պօէմը երևի երբէք էլ չի վերջանայ։

— Ինչո՞ւ։

— Չը գիտեմ... Ես էլ չը գիտեմ։

Քիչ տեղ նրանք լուռ գնացին. աղջիկը էլի դարձաւ Սուրէնին, մի շինծու արհեստական ժպիտ դէմքին։

— Ասացէք, ճշմարի՞տ է, որ պ. Վահանի մօտ մի օրիորդ է եկել... ով է նա։

— Այո, բայց ես չը գիտեմ թէ ով է նա...

— Այդ օրիորդը նրա սիրա՞ծն է։

— Ես այդ չը գիտեմ։

— Դուք ճիշտ չէք ասում. նա ձեր մօտ ընկերն է, և դուք այդ չէք կարող չիմանալ։

— Ես իսկապէս չը գիտեմ, թէ նա սիրում է նրան թէ կատակ է, ժամանցի համար։ Բոլոր գեղեցիկ աղջիկները նրան դուր են գալիս... Նա դժուար թէ կարողանայ մէկին սիրել,—ծիծաղեց Սուրէնը։

— Ուրեմն նա գեղեցիկ է։

— Ճաշակի խնդիր է... Այո, լաւն է։

— Երևի շատ է սիրում։ Նրա գալուց յետոյ մեզ բոլորովին մոռացել է, կարծես գոյութիւն էլ չենք ունեցել։ Դա ուղղակի վիրաւորական է։

Նա բաց թողեց Սուրէնի թեւը և նստեց ճանապարհին շինված ցածլիկ պատի վրա։ Օրիորդի դէմքը մռայլվեց։ Նա լուռ նստած էր։ Սուրէնը կանգնած էր նրա մօտ, գլխարկը ձեռքին և անթարթ նայում էր նրան։ Նա մի քանի անգամ քիչ էր մնում ընկնէր նրա ոտներն ու աղաղակէր. «Ես ձեզ սիրում եմ»։ Բայց ամեն անգամ զսպում էր և յետաձգում՝ մի ուրիշ աւելի յարմար առիթի։

— Ինչո՞ւ մի բան չէք ասում։

— Հա,—քնից արթնացածի պէս բացագանչեց Սուրէնը։

— Դուք երազանքների մէջ էիք, ես ձեզ խանգարեցի։

— Ես միայն մի երազ ունեմ և այդ երազը իրականացած է։

— Ի՞նչ երազ։

— Դա մի հարցնէք, դա իմ հոգու գաղտնիքն է։

Աղջիկը լուռ էր. նա կարծես չէր էլ նկատում Սուրէնի ներկայութիւնը, անտարբեր նրա ասածներին, նրա մտքերը շատ հեռու էին այդտեղից։

— Այդ ես ձեզ կասեմ, բայց ոչ այժմ, մի ուրիշ անգամ...

— Այո... իսկ այժմ գնանք, արդէն մութը ընկնում է։

Նրանք իջան եկած ճանապարհով։ Հազիւ մի քանի խօսք ասելով մէկ մէկու։

Կամրջի վրա օրիորդը մի վայրկեան կանգ առաւ.

— Դուք լա՞ւ էք վազում։

— Ինչպէս... վազում... իսկապէս չը գիտեմ։

— Ապա մինչև ձեր տան դուռը կարող էք ինձ բռնել, դէ, պատրաստվեցէք. մէկ, երկու, երեք...,—արագ, այծեամի պէս սրընթաց նա վազեց։

Սուրէնը մի վայրկեան կարծես տատանվեց ու սկսեց վազել նրա ետևից։

Դրան առաջ աղջիկը կանգ առաւ բարձրաձայն ծիծաղելով։

— Ա՜խ, դուք չը կարողացաք, չը կարողացաք բռնել...

— Ես ուշ սկսեցի վազել։

— Լաւ, մի արդարանաք, դուք կը գա՞ք թէ ուզում էք տուն մտնել։

— Եթէ թոյլ կը տաք։

— Խնդրեմ... պ. Վահանը երևի տանը չէ։

— Հազիւ թէ... Վահա՜ն...,—կանչեց Սուրէնը, բայց ներսից նրան ոչ ոք չը պատասխանեց։

— Ի հարկէ տանը չէ, այս ժամերին երբէք տանը չէ լինում։

— Երևի իր սիրածի մօտ է.— թեթև հեգնութեամբ ասաց աղջիկն ու առաջ անցաւ։

IX

Արդէն երեք օր էր, որ Վահանն իր աղջկայ հետ գնացել էր քաղաք։ Նրանց գնալը այնքան անսպասելի էր, որ Վահանը ոչ ոքի հետ չը կարողացաւ մնաս բարով ասել։ Սուրէնին ասաց, որ ներողութիւն խնդրէ բոլորից։ Սուրէնը բոլորովին մենակ էր մնացել։ Շունն էլ չը կար։ Երկու օր է՝ ինչ նա նեխվում է արևի տակ գետափին։ Մի քանի օր ոչ ուտում էր, ոչ խմում։ Մի առաւօտ էլ Սուրէնը զարթնեց և գտաւ նրան իր բնից մի քանի քայլ հեռու սատկած։

Այդ թշուառ կենդանին կարծես նախազգացել էր, որ շուտով էլի պիտի սկսվեն քաղցի ու տանջանքների օրերը, և չէր ուզում այլ ևս կրկին ճաշակել ու մեռել էր։ Սուրէնը երկար կանգնած նրա մօտ դիտում էր այդ խեղճ կենդանուն և մտածում, որ այժմ նա ոչինչ, ոչինչ չէ զգում։

X

Աշունը սկսում էր յիշեցնել, որ ինքը հեռու չէ... և շուտով ծառ ու ծաղիկ կը զգան առաջարկած բալկանեան դաշնակցութիւնը վերականգնելու նկատմամբ։ Կառավարութեան օրգան «Նէա Իմէրան» ասում է. «Քառեակ համաձայնութեան մեծ պետութիւնները ճնշումն են գործ դնում յունաց կառավարութեան վրա, մտադրվելով ստիպել նրան հրաժարվել չէզոքութիւնից առանց որևէ երաշխաւորութեան կամ որոշակի վարձատրութեան»։ Վենիզէլոսի կողմնակիցների օրգան «Նէա Էլլասը» կարծում է, որ վերջնագրի բովանդակութիւնը ողբերգական է Յունաստանի համար։ Լրագիրը ցաւում է, որ Յունաստանը չը հետևեց Վենիզէլոսի ծրագրին և այժմ ընկել է ծանր դրութեան մէջ, որովհետև նրան առաջադրված են նրա շահերին ներհակող պայմաններ։ Կառավարական օրգան «Էմբրոսը» ասում է, որ Յունաստանը չի պատասխանի քառեակ համաձայնութեան վերջնագրին Սօֆիայի կաբինէտի վճռից առաջ։ Լրագիրը ասում է, որ յիշեալ մեծ պետութիւնների հանդէպ գալը ծանր տպաւորութիւն է գործել կառավարական շրջաններում։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԳՐԱՒՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ՍՏՕԿՀՕԼՄ.—«Սոց. Դեմ.» լրագիրը Վարշավան գրաւելու մէջ բոլորովին վճռական ազդեցութիւն չէ տեսնում պատերազմի վերջաւորութեան նկատմամբ։ Վարշավան ռուսական տեսակէտից հանդիսանում է միայն արտաքին ամրութիւն։ Չը նայած Վարշավայից հեռանալու համար տեսնվող պատրաստութիւններին, դէպքերը զարգանում էին դանդաղ, քան սպասվում էր։ Ռուսների դիմադրութիւնը յամառ էր։ Գերմանացիներին չաջողվեց Վարշավան գրաւելիս խոշոր կորուստներ պատճառել ռուսներին։ Այդպիսով արևելքում ռազմական գործողութիւնների մէջ, անգամ Վարշավան գրաւելուց յետոյ, էական փոփոխութիւններ տեղի չունեցան։ Ռուսները ստիպված էին նահանջել իրանցից անհամեմատ գերազանց գերմանական զօրքի ճնշման ներքոյ, բայց և այնպէս Ռուսաստանը հնուց անտի ներկայանում է այնպիսի ոյժ, որի մասին վկայել են պատմութեան մէջ Կարլ XII և Նապոլէօնը։ Նոր դիրք գրաւելուց յետոյ հաշտութիւն կնքելու հնարաւորութիւնը աւելի է հեռանում այն պատճառով, որ Գերմանիան, հաւատացած իր ռազմական գերազանցութեանը, կը կամենայ վերջ ի վերջոյ իր պահանջները թելադրել ամբողջ աշխարհին։ Մինչդեռ Արևմտեան Եւրոպայի ժողովուրդներն աւելի են համոզված, որ առաջ, քան լսելի հաշտութեան մասին խօսելը, Գերմանիային ստիպելու են ընդունել, որ սահման կայ նրա միլիտարիզմին։

«Ֆրանկ. Ցայտ.»-ի մէջ տպված պաշտօնական հեռագրից երևում է, որ լուրջ քաղաքական ու վարչական դժուարութիւններ են ծագել Գերմանիայի համար Վարշավան գրաւելուց յետոյ, որովհետև Վարշավան բնակված է գլխաւորապէս լեհերով, որոնք կողմնակից են ինքնուրոյն Լեհաստանի վերածնութեան։ «Դոյչէ-Նախրիխտէնը» տալիս է մի հեռագիր այն մասին, որ Վարշավան գրաւելու լուրն առնելուն պէս խնդոյն Բերլինը զարդարվեց դրօշակներով, բայց ոչ մի ոգևորութիւն ինչպէս պատերազմի առաջին ամիսներումն էր. չէին լսվում ուրախագին բացագանչութիւններ։

«Ստոկհ. Դագ.»-ի թղթակիցը նոյնպէս հաղորդում է, որ Բերլինի ազգաբնակութիւնը հանգստութեամբ ընդունեց Վարշավան գրաւելու տեղեկութիւնը։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Կենտրոնական զինուորա-արդիւնաբերական կոմիտէտում ստացված տեղեկութիւնների համաձայն, վերջնականապէս վճռվել է կազմակերպել ֆինլանդական արդիւնաբերութիւնը, պետական ինքնապաշտպանութեանը աջակցելու համար։ Հելսինգֆորսում կայացած Ֆինլանդիայի արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի ներկայացուցիչների ընդհանուր ժողովը բազմակողմանի կերպով քննել է այն պատուէրների հարցը, որոնց կարող է ընդունել և կատարել ֆինլանդական արդիւնաբերութիւնը։ Ֆին արդիւնաբերողների կողմից ընտրվել է առանձին մասնաժողով, զօրքի պիտոյքները հոգալու համար։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պետական Դումայի ընդհանուր ժողովների դահլիճում, Դումայի բազմաթիւ անդամների ներկայութեամբ, զինուորական, ծովային, ֆինանսների և առևտրի մինիստրների ու այլ ներկայացուցիչների մասնակցութեամբ կայացաւ բիւջետային մասնաժողովի նախագահ Ալեքսէենկօյի նախագահութեամբ բիւջետային և զինուորա-ծովային գործերի մասնաժողովների միացեալ նիստը։ Զօրավար Սավիչը պարզեց զօրքի պիտոյքները հոգացող առանձին մարմին հաստատելու օրինագծի գլխաւոր հիմունքները։ Ընդհանուր վիճաբանութիւնները սկսվեցին Դումայի նախագահի ընդարձակ ճառով։ Նիստի վերջում ընդհանուր վիճաբանութիւններն աւարտվեցին։ Որոշվեց դիմել կառավարական նախագծի յօդուածային ընթերցման։ Որոշվեց առանձին մարմնի կազմը 32 անդամից, որոնց թւումն են Պետական Դումայի և Խորհրդի նախագահները, ծովային, ֆինանսների, առևտրի, հաղորդակցութեան մինիստրութիւնների և պետական վերահսկիչի ներկայացուցիչները, մի մի հոգի զեմստվոյին և համաքաղաքային միութիւնների կողմից։ Սրա նախագահն իրաւունք է ունենալու հրաւիրել իբրև անդամ անձինք գիտութեան, արդիւնաբերութեան և բանւորների ներկայացուցիչներից։

Դումայական ֆինանսական մասնաժողովը ֆինանսների մինիստրի ներկայութեամբ եկամտային հարկ մտցնելու հարցի առթիվ ցանկալի գտաւ, որպէսզի այդ հարկին ենթարկված լինեն 1000 րուբլուց աւելի ստացող բոլոր անձինք, ինչպէս նաև ակցիոներական ընկերութիւնները։ Մասնաժողովը ցանկալի չը գտաւ տարածել եկամտային հարկը զեմստվոների և քաղաքների վրա։ Մասնաժողովը մերժեց Լվովի առաջարկութիւնը՝ տարածելու եկամտային հարկը Ֆինլանդիայի վրա։

Լոնդոնի ռուսաց դեսպանը արտաքին գործերի մինիստրութեանն է ուղարկել խորտակված «Լուզիտանիայի» 2-րդ և 3-րդ կարգի ռուսահպատակ ճանապարհորդների ցուցակը։

ԼՈՆԴՈՆ.—Լորդ Ուէրդլի նախագահութեամբ ռուս-անգլիական կոմիտէտը ընդունեց հետևեալ բանաձևը. «Անգլօ-ռուսական կոմիտէտը կամենում է արտայայտել ռուս ազգին՝ նրա քաջարի ռուս զօրքի հրամանատարի միջոցով՝ իր խորագոյն հիացմունքը այդ զօրքի՝ Լեհաստանում, յընթացս ամբողջ պատերազմի, ամենադժուարին հանգամանքներում ցոյց տուած հոյակապ գործելակերպի առթիվ։ Ռուսաստանը ցոյց տուեց չափազանց գնահատելի աջակցութիւն արևմտեան զօրաճակատի դաշնակիցներին և հնարաւորութիւն տուեց Մեծ-Բրիտանիային՝ կռւի դաշտը հանել անհամեմատ մեծ թիւ զօրքերի, քան հաւանական էր թւում մինչև պատերազմի սկիզբը, ըստ որում հնարաւորութիւն կայ աւելի մեծացնել այդ թիւը։ Կոմիտէտը լիակատար հաւատ է յայտնում, որ ռազմագիտական ընկատումներով կատարված ժամանակաւոր նահանջի մէջ ռուս ժողովուրդը հանգստութեամբ ոյժ կը քաղէ վերջնական յաղթանակի համար»։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Սկսվեց պահեստներին զինուորական ծառայութեան կոչելու գործողութիւնը. կանչվելու են մինչև 45 տարեկան հասակ ունեցողները։ Զինավարժութիւնները տևելու են 1 ամիս։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բերլինի մամուլի տեղեկութիւնների համաձայն, Գերմանիայում պատերազմական գործողութիւնների սկզբից դադարել են 1200 գաւառական լրագիրներ և մասնագիտական հրատարակութիւններ։

ՓԱՐԻԶ.—Պատերազմի տարեդարձի առթիվ Պուանկարէն դիմեց պարլամենտին մի նամակով, որի մէջ իր և կառավարութեան և պալատների կողմից յարգանք, հիացմունք ու երախտագիտութիւն է արտայայտում զօրքին և ազգին։ Վերջում նախագահը ընդգծում է, որ Ֆրանսիան ջերմ կերպով ցանկանում է յաղթել արիւնարբու թշնամուն և նա կը յաղթէ։

ՀԱՎՐ.—Պատերազմի տարեդարձի առթիվ անգլիական թագաւորը ուղարկեց բելգիական թագաւորին մի հեռագիր, որի մէջ հաստատ համոզմունք է յայտնում, թէ ընդհանուր ջանքերը կը յանգեն յաղթական վախճանի. նոյնպէս վստահեցնում է, որ ինքն և Մեծ-Բրիտանիան վճռել են Բելգիայի քաջարի զօրքերի հետ միասին շարունակել պատերազմը մինչև այն րոպէն, երբ խաղաղութիւնը ապահովված կը լինի։ Բելգիական թագաւորը իբրև պատասխան անկեղծ երախտագիտութիւն յայտնեց։

ՓԱՐԻԶ.—«Հիւմանիտէ» լրագրին հեռագրում են Հավրից, որ Բորինաժում տեղի ունեցաւ բանւորական մեծ գործադուլ։ Գերմանացիք կրակում էին գործադուլաւորների վրա։ 2 զինուոր և 7 բանւոր սպանվել են, մի քանի մարդ վիրաւորվել են։ Գերման զինուորները գրաւել են քարածխային հանքերը։ Շարլէրուայում անկարգութիւններ տեղի ունեցան մթերքների թանգութեան պատճառով։ Խանութները կողոպտված են։ Զօրքերը ցրեցին ամբոխը. սպանվել են 10 մարդ, վիրաւորվել են 40 հոգի։

ՓԱՐԻԶ.—Պաշտօնապէս յայտարարված է, որ գեներալ Սառրայլը նշանակվել է արևելքում Ֆրանսիայի զօրքերի ընդհանուր հրամանատար։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՔԸ

◆ «Р. У.»-ին հաղորդում են Պետրօգրադից, որ զինուորական մասնագէտների կարծիքով՝ Վարշավայի գրաւման նման դրութիւն ներկայանում է Ռիգայում, որի պաշտպանողական գիծը կազմում է Միտաւ գետը, որի շուրջ և տեղի են ունենում կատաղի կռիւներ։ Առ հասարակ Պրիբալտիկ շրջանում հակառակորդի գործողութիւններն ուղղված են Ռիգա քաղաքի դէմ։

◆ Մայրաքաղաքի թերթերի ասելով, մեծ հոսանքով Մոսկվա են դիմում Լեհաստանից փախստականները։ Մոսկվայի և Մինսկի միջև գտնվող կայարանները, բոլոր գիւղերն այդ շրջանում լի են փախստականներով։ Համեմատ հաշուով՝ նրանց թիւը հասնում է կէս միլիոնի։

◆ Ռուսաց դիւանագիտական շրջաններում տեղեկութիւն է ստացվել այն մասին, որ Սօֆիայի ռուսաց դեսպանը ժխտում է թիւրք-բուլղարական համաձայնութեան տեղեկութիւնը։ Երրեակ համաձայնութեան բանակցութիւնները Բուլղարիայի հետ կախված են Սերբիայի վճիռներից, որոնք սպասվում են մօտիկ ապագայում։

◆ Ռիգայում իջեցրել են եկեղեցիների զանգակները. յուլիսի 21-ից լրագիրները լոյս չեն տեսնում։

◆ Յուլիսի 19-ին գերմանական տաուբէն 3 ռումբ նետեց Կամենեց-Պօդոլսկի վրա. յուլիսի 21-ին ռուս զօրքերը կարողացան հրացանազարկ անել կրկին երևացած տաուբէին։

◆ Լոնդոնում նպաստաւոր տպաւորութիւն է գործում Յունաստանի և Ռումինիայի վերաբերմունքը դէպի դաշնակիցները։

◆ Բերլին են տարել այս օրերս 180,000 վիրաւոր։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ Ռիգայում մեծ հրդեհներ են։

◆ «У. Р.»-ին հաղորդում են, որ Բուկովինայում աւստրիացիք նահանջում են։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Պետրօգրադից, որ Պետական Դումայում յաճախ լուր է պտտվում, թէ Վիլհէլմը Ռուսաստանին առաջարկել է հաշտութիւն հետևեալ պայմաններով. Գերմանիան զիջում է Ռուսաստանին ամբողջ Գալիցիան Լվովի և Պերեմիշլի հետ միասին, հեռանում է Լեհաստանից, բացի Կալիշից և Չենստոխովից, և առաջարկում է Ռուսաստանին պայմանաւորվել Աւստրիայի և Ֆրանսիայի հետ պատերազմը աւարտելու մասին։

◆ Աթէնքի մամուլը հաղորդում է, որ իբր թէ Բուլղարիան յարձակվի Սերբիայի վրա։ Սպասվում է, որ Յունաստանը պատերազմ կը յայտարարէ Բուլղարիային։

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԱԼ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

(Քննական խոհեր պատերազմի տարեդարձի առիթով)

V

Շատերը շլացել են Գերմանիայի արդիւնաբերութեան թռիչքային զարգացման յախուռն ծաւալումներից, նրա տեխնիկայի հրաշագործութիւններից, ռազմական առաւետ դիւթական ոյժից։ Եւ այդ բոլորի հանդէպ չունեն նրանք ուրիշ ոչ մի վերաբերմունք, բայց եթէ՝ «ոյժի առաջ խոնարհվելու»։

Սակայն դա պատմական տեսակէտ չէ և ոչ էլ քննական վերաբերմունք. դա աւելի շուտ անճարակ մանուկի ապշանք է։

Կարող ոյժին տեղի տալ, կամ մէկի յաղթական ոյժը, որպէս փաստ խոստովանել՝ չի նշանակում հոգով-մարմնով երկրպագել նրան, համակրել նրա գործն ու ձեռնարկը։

Հարցը չի վերաբերում ամենևին կռւող կողմերից մէկի կամ միւսի արդիւնաբերական պատրաստութեանը կամ տեխնիկական ոյժին, այլ երկրում տիրող այն սիստեմին, որի ձեռքին և որի պահպանութեան համար ծառայում են, որպէս գործիքներ, տեխնիկայի մատակարարած բոլոր առարկայական արժէքները։ Ինչու է ուրացվելու չափ մոռացվում, որ Գերմանիայում աւելի, քան այլուր, արդիւնաբերական էներգիայի խոշորագոյն մասեր նուիրված են և ծառայում են միլիտարիզմին, պատերազմական տեխնիկային, ֆիզիկական խտացած ոյժի անհաւասար ձևերին։ Իսկ վերջինս մի այնպիսի բացասական, հակակուլտուրական երևոյթ է, որի առաջ ոչ միայն չը պիտի խոնարհվել երկիւղական ապշանքով, այլ պիտի ատել նրա գոյութիւնը և տենչալ նրա անթերի խորտակումը։

Մոռացվում է ամենագլխաւորը. պատմական բազմիցս փորձված ու ճշտված տեսակէտը։ Յաճախ է պատահում, որ քաղաքական ձևերով յետամնաց, ռեակցիոնէր պետութիւնը համակերպվելով խրախուսում և զարգացնում է տնտեսական բարդ ու կատարելագործված ձևեր՝ իրաւակարգի և հասարակարգի հին կաղապարները ապահով պահպանելու համար։

Ճիշտ նոյն վիճակի մէջ գտնվում է ժամանակակից Գերմանիան։

Պարադոքս չը թւում, որ Վիլհելմ-իւնկերական պրուսական ռեակցիան արագ ու անարգել ընդառաջել է տնտեսակարգի նորագոյն ձևերի—կապիտալիզմի—ամենափարթամ զարգացման։ Բայց ոչ այն պատճառով, որ հին քաղաքական ռեակցիան տրամադիր է իր տիրական դիրքերից տեղի տալու խոշոր բուրժուազիային։ Գերմանական պետական ռեժիմը իր տնտեսական լիբերալ քաղաքականութեամբ կարողացաւ մի կողմից հաշտութեան ամուր կամուրջ ձգել երկու տիրապետող դասակարգերի՝ խոշոր կալուածատիրական ազնուականութեան և խոշոր բուրժուազիայի կամ ուրիշ խօսքով՝ դասային ու փողային երկու արիստոկրատիայի միջև, միւս կողմից ստեղծել մի այնպիսի ահռելի միլիտարիզմ, որի դերը չափազանց նշանակալից և բազմակողմանի պիտի լինէր Գերմանիայի համար։ Այդ միլիտարիզմը՝ իբրև կազմ ու պատրաստ կուռ ապարատների մի վիթխարի մեխանիզմ, պէտք է մի կողմից՝ պատրաստական զրահապանակ լինէր ներքին ռեակցիային վտանգ սպառնացող «ներքին թշնամիներին» հարկ եղած դէպքում և հարկաւոր չափերով զսպելու համար, միւս կողմից՝ նա պիտի ագրեսիվ իմպերիալիզմի պահանջվող արշաւանքները գործէր և, երրորդ կողմից, որ պակաս նշանակութիւն չունէր, գերմանական միլիտարիզմը պէտք է արթուն պահապանի նման հսկէր և խոչընդոտէր հասարակական կեանքի յառաջադէմ դեմոկրատիզացիայի պրոցեսը ժամանակակից առաջաւոր Եւրոպայում։

Հասցնել խնդրի քննութիւնը մինչև այս կէտը՝ թւում է տուած լինել արդէն նրա բաւարար պատասխանը։

Ներկայ պատերազմում ծաւալել է գերմանական միլիտարիզմը իր առարկայական և անձնական ոյժերի բովանդակ ընդերքը՝ վերայիշեալ դերերից երկուսը խաղալու համար. հասցնել գերմանական առաջխաղաց իմպերիալիզմը իր նուաճումների վերին կատարին, ասել է՝ հիմնել գերմանական կայսրութեան Weltherrschaft, համաշխարհային տիրապետութիւնը։ Բայց գերմանական միլիտարիզմի և իմպերիալիզմի յաղթանակը, իր հերթին, ուրիշ բան չէր նշանակի, բայց եթէ պրուս-գերմանական քաղաքական ռէակցիայի յաղթանակ՝ Արևմտեան Եւրոպայի առաջադէմ քաղաքացիութեան դեմօկրատական տենդենցների դէմ։ Դա կը նշանակէր, այնուհետև, պանգերմանիզմի յաղթանակ՝ ի հաշիւ բազմաթիւ մանր ազգութիւնների կուլտուրական ուրոյնութիւնների վտանգման։ Դա կը նշանակէր ոչ միայն աւելի կրիտիքական դարձնել գոյութիւն ունեցող ազգային հարցերը՝ Եւրոպայում և Փոքր Ասիայում, այլ և ստեղծել նոր ազգային հարցեր Բելգիայում, Սերբիայում, ամբողջ Բալկաններում։ Այժմեանից արդէն նախագծել են Բերլինում ազդեցիկ միլիտարիստները (որոնց մէջ կան նաև կառավարութեան ներկայացուցիչներ), որ Գերմանիայի յաղթութեամբ կազմվի պետութիւնների խոշոր ֆեդերացիա՝ Գերմանիայի գլխաւորութեամբ, որի մէջ պիտի մտնեն բացի Գերմանիայից և Աւստրօ-Ունգարիայից՝ նաև Բելգիան, Հոլլանդիան, Շվէյցարիան, Դանիան և այլն։

Հասկանալի է, ըստ ինքեան վերցրած՝ առաջադիմական երևոյթ է՝ պետական մարմինների և երկիրների խոշոր, համամփոփ կենտրոնացումները։ Բայց վայ այն ազգերին ու ժողովուրդներին, որոնք պիտի իրանց քաղաքական ճակատագիրը ենթարկեն պրուս-գերմանական ռէակցիայի հեգեմոնիային. դա արդէն էվոլիւցիա չէր լինի, այլ մի տխուր յետադարձ շարժում։

Այնուհետև Գերմանիայի յաղթութիւնը կը նշանակէր մանավանդ հարուած ֆրանսիական հանրապետական սիստեմի դէմ և ռոյալիստների, բօնապարտիստների ու պապականների ռեակցիոն շարժման աջողութիւն, որոնք ցանկանում են նորից վերականգնել կէս դարից ի վեր ընդմիշտ փլատակված սիւները ֆրանսիական միապետութեան։ Վերջապէս, դա կը նշանակէր նոյնիսկ գերմանական դեմօկրատիզմի պարտութիւն և երկրի ներքին ռեակցիոն ռեժիմի ուժեղացում։ Կարճ՝ դա կը նշանակէր յաղթութիւն տալ Եւրոպայում ցեզարիզմի և բիւզանդականութեան մառայլ շրջաններին։

Ո՛չ, բովանդակ Եւրոպայի էմինէնտ շահերը պահանջում են, որ ներկայ պատերազմը լինի վերջին գերեզմանափողը քաղաքական և իրաւական այն ռեակցիոն բեկորների, որ ամենայն խնամքով պահպանվել են միջին դարերից ի վեր Արևմտեան Եւրոպայից միմիայն գերմանական երկիրներում, մանաւանդ Գերմանիայում։ Իսկ այդպէս կը լինի միմիայն այն ժամանակ, եթէ խորտակվի Գերմանիայի ռազմական վիթխարի ոյժը, այսինքն տիրող ռեակցիայի բրօնզէ պատուանդանը։

Հարցը արևի լոյսի նման պարզ է։ Գերմանիայի քաղաքական զարգացումը դեռ չի բոլորել իր այն շրջանը, երբ տնտեսական յարաբերութիւնների հասունացած դրութիւնը, նորագոյն ձևերը ընդհարվելով հին իրաւական վերնաշէնքի հետ՝ վերացնում են վերջինս և կեանքի կոչում համապատասխան իրաւակարգ, այնպէս, ինչպէս գոյութիւն ունի Անգլիայում և Ֆրանսիայում։ Արդիւնաբերական ոյժերը, երկրի ողջ հարստութիւնը կենտրոնացել է գերմանական բուրժուազիայի ձեռքը, իսկ քաղաքական ոյժը, պետական մեխանիզմը տակաւին անկողոպտելի սեփականութիւնն է համարվում կալուածատէր ազնուականութեան, արտօնեալ իւնկերթումին։ Պիտի բռնկվի վերջապէս մի օր այդ թաքնված, լատենտ մնացած հակասութիւնների ահաւոր, բայց ազատագրական պայքարը։ Բուրժուազիան վաղուց է սպառել իր քաղաքական կուրսի օպոզիցիոն դերը. նրանից յոյս չը կայ, իբրև կռւող ակտիվ ոյժ։ Ստորին, կազմակերպված դեմոկրատիան անզօր էր խաղաղ ժամանակ, պարլամենտական պայքարով խոշոր փոփոխութիւնների հիմքը դնել, որքան էլ նա տենչում էր իր ծրագրային բոլոր ձգտումներին։

Եւ ահա այժմ եւրոպական մարդկութիւնը ապրում է այն անմոռանալի էջը իր պատմական կեանքի, երբ հնարաւոր է սպասել իդէալական մոմենտի գալուստը։ Գերմանիայի ռազմադաշտային ահեղ կատաստրոֆները կը հասունացնեն նաև ներքին կեանքի կատակլիզմը, անխուսափելի հեղեղումների ժամը։ Գերմանիայի կատարեալ պարտութիւնը սկիզբը կը դնէ ներքին ազատագրական յեղափոխութեան։ Մի ակտ, որ փրկարար նշանակութիւն պիտի ունենայ ոչ միայն գերմանական, այլ և եւրոպական բոլոր ժողովուրդների համար։

Ահա ինչու ենք ցանկանում Գերմանիայի կատարեալ պարտութիւնը։

B. Lucifer

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—○—

ՈՍԿՈՎ ՉԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ

Հայ միլիօնատէրերը կարող են ասել ինձ.

—Լաւ, ընդունում ենք, որ մենք անտարբեր ենք դէպի մեր ազգի անասելի թշուառութիւնները, և դուք ունէք իրաւունք մեզ անուանելու անսիրտ, անհոգի։ Իսկ ինչ էք դուք, ինչ է հայ ինտելիգենցիա կոչված ձեր դասակարգը։ Այդ բազմաթիւ բժիշկները, իրաւաբանները, ինժեներները, ճարտարապետները, որոնք այնքան հետամուտ են մեզ և այնքան շոյում են մեզ ամեն օր։ Չէ որ նրանք մեզնից աւելի գիտեն՝ ինչ ասել է ազգային թշուառութիւն և մի ամ-

---

Նրա մահաբեր շունչը... տարափոխիկ թռչունները սկսել էին չուել... ամարանոցը կամաց-կամաց դատարկվում էր։

Սուրէնը երբ դուրս եկաւ տնից, մի քանի քայլ էր արել, երբ նկատեց, որ դէպի իրան էր գալիս օր. Ժէնիան, և նա որոշեց անպատճառ ասել։

— Ես ձեզ մօտ էի գալիս։

— Շատ ուրախ եմ... գնանք։

Նրանք լուռ դիմեցին դէպի տուն։

— Էլ կարիք չը կայ վեր բարձրանալու, նստենք այստեղ։

— Ինչպէս կուզէք։

Նրանք նստեցին բաղում խնձորենու տակ, նստարանի վրա։

Մի քանի րոպէ երկուսն էլ լուռ էին։

— Ո՞ւր է ձեր շունը,—ընդհատեց օրիորդը նայելով այս ու այն կողմ։

— Սատկեց։

— Խե՞ղճ...

— Արդէն մի շաբաթից աւելի է։ Շատ էր ծերացել։

Սուրէնը խօսում էր, բայց բոլորովին ուրիշ բան էր մտածում և ժամանակ էր վաստակում, որ մի քիչ հանգստանայ, սիրտը աւելի կանոնաւոր բաբախի, այլ ոչ այդպէս խենթ կերպով թռչկոտայ, որ կարողանայ ասել, ինչ որ ուզում էր։

Օր. Ժէնիան գլուխը կախ, ձեռքի հովանոցով խաղխաղում էր գետինն ու լուռ էր և կարծես դժուարանում էր ասել։

— Նա գնա՞ց,—յանկարծ դադարելով գետինը խաղխղելուց, հարցրեց նա վեր բարձրացնելով գլուխը։

— Ի՞նչպէս, ով...

— Պ. Վահանը։

— Այո, վաղուց. չէ որ գիտէք. նա ներողութիւն խնդրեց բոլորից, որ չը կարողացաւ տեսնվել։

— Այո, դուք այդ ասել էք... Իսկ չը գիտէք ուր գնաց։

— Թիֆլիս։

— Նա ոչինչ չը տուե՞ց ինձ յանձնելու համար... նամակ... գուցէ մի բան ասաց, դուք մոռացել էք։

— Ոչինչ։

Մի վայրկեան նորից տիրեց լռութիւն և որից յետոյ օրիորդը վեր կացաւ և լուռ դիմեց դէպի դուռը։

— Դուք գնում էք։

— Ցտեսութիւն։

— Մի րոպէ։

Աղջիկը կանգ առաւ և լուռ սպասում էր։

— Մի րոպէ։

— Դէ։

— Ես ձեզ սիրում եմ,—անբնական բարձր կանչեց Սուրէնը և էլ ոչինչ չը կարողացաւ ասել...

— Դուք... հա-հա-հա...,—կարճ նեարդային ծիծաղեց օրիորդը... ուզեց խօսել, նորից ծիծաղեց ու հիսթերիկ կերպով սկսեց լալ։

— Ձեզ ի՞նչ պատահեց,—վախեցած հարցրեց Սուրէնը մօտենալով։

— Ոչինչ, ոչինչ, ջուր, խնդրում եմ։

Սուրէնը վազեց, սենեակից մի բաժակ ջուր բերեց։

Մի քիչ անց՝ նա հանգստացաւ, նստեց նստարանի վրա ու երկար մնաց լուռ։

— Ներեցէք,—շշնջաց նա մեկնելով ձեռքը Սուրէնին,—գուցէ դուք վիրաւորվեցիք. ես չէի ուզում ձեզ վիրաւորել... Ոչ, ոչ...

Նա մի վայրկեան ձեռքի թաշկինակով ամուր սեղմեց աչքերը, կարծես արգելելու արցունքներին հոսել...

— Ես խղճում, ես ափսոսում եմ, որ չեմ կարող սիրով պատասխանել ձեր անկեղծ զգացմունքին, բայց... բայց... ներեցէք ինձ...

Նա ոտի կանգնեց։

— Եթէ պատահէք պ. Վահանին, ասացէք, որ ես նրան շատ էի սիրում, կեանքիցս աւելի... կեանքիցս...

Նա նեարդային կերպով սրբեց աչքերը, ուղղեց մազերը և արագ դուրս եկաւ բաղից։

Միք. Մանուէլեան

(Վ ե ր ջ)

բողջ ժողովրդի մահացումը։ Ասացէք, նրա՞նք որքան պատասխանատու են և զգայուն։

Եւ հայ միլիօնատէրերը կատարեալ իրաւունքի տէր են այդ հարցը տալու, թէև դա նրանց չի փրկի ազգային նախատինքից։ Եւ ես չեմ կարող նրանց պատասխանել առանց ամօթի, առանց խղճի խայթերի։

Չեմ կարող, վասնզի այն դառը խօսքերը, որ ես ուղղեցի նրանց, կրկնակի ոյժով և եռակի թոյնով պիտի ուղղվեն և հայ ինտելիգենցիայի ահագին մեծամասնութեանը։

Արդարև, մարդ ուղղակի սարսռում է, երբ մի վայրկեան դիտում է այդ մեծամասնութեան այժմեան դիրքը և մտածում նրա մասին։ Դա արդէն սոսկ ժլատութիւն կամ էգօիստական անտարբերութիւն չէ, այլ զգացումների կատարեալ բթութիւն, ուղեղի կատարեալ ժանգոտում, բարոյական մի հգակի պրոստրացիա։

Արդարև, հայ ինտելիգենցիան, շատ աննշան բացառութեամբ, իր ազգի ներկայ պատմական վայրկեանում, աւելի մեծ բարոյական սնանկութիւն ցոյց տուեց, քան հայ պլուտոկրատիան։

Ասում են՝ ում շատ էր տրված, նրանից շատ էլ պահանջվում է։

Ես չեմ ասում, թէ հայ ինտելիգենցիային շատ մեծ բան է տրված։ Քաւ լիցի. երևի դեռ դարեր են հարկաւոր, մինչև որ նա կը բարձրանայ այն աստիճանին, որի վրա կանգնած են քաղաքակիրթ ազգերի ինտելիգենցիաները։

Բայց, Աստուած իմ, չէ՞ որ այդ բարձրագոյն կոչված ուսումը մի բան տուել է նրան։ Յամենայն դէպս աւելի, քան նաւթային հանքերը հայ միլիօնատէրերին և խանութը՝ հայ պլուտոկրատներին։

Հապա ինչո՞վ են տարբերվում նրանք իրանց մտաւոր ապիկարութեամբ, բարոյական աղքատութեամբ, ժլատութեամբ և անսրտութեամբ…

Ոչինչով։ Շիրվանզադէ

ՍԱԹԵՆԻԿ ԱԴԱՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ընկերներ.

Անողոք ճակատագիրը մի հովասուն ուռենի ես կորզեց հայի անապատից։ Յաւիտեան լռեց հայ թատրոնի վերածնութեան համար բաբախող բիւրեղային սիրտը՝ միշտ դէպի ներկայից և յաւերժ ձգող դէպ անյայտ հեռուները, դէպի կատարելութիւն։ Համեստութեան տիպար Սաթենիկը չը կայ այլևս… Նա գնաց դէպ անէութիւն… Հայ բեմը՝ յանձին Սաթենիկի՝ կորցրեց ազնիւ և գաղափարական գործիչ։

Դառն է իրականութիւնը և ակնյայտնի. և մենք, նրա ընկերները, որ կանգնած ենք նրա թարմ շիրմի առաջ, ինչո՞վ կարող ենք յաւերժացնել անփոխարինելի ընկերոջ յիշատակը, եթէ ոչ կատարելով նրա բաղձանքներից մէկը՝ հիմնելով դերասանական դրամարկղը։

Ընկերներ. օգնիր ինքդ քեզ նշանաբանը թող առաջնորդէ մեզ. հայ թատրոնը շատ սպասելիքներ ունի իր քուրմերից. մե՛նք պիտի լինենք նրա իսկական բարեկամը և նախանձախնդիրը նրա առաջադիմութեան։

Սրբեն դուրս գանք հովանաւորվողի դերից և գիտակցօրէն ընթանանք ժամանակի պահանջների հետ։

Հիմնենք դերասանական դրամարկղ։

Անենք այդ առաջին քայլը, որին հեշտութեամբ պիտի հետևի երկրորդը։

Այդ հիմնարկութիւնը միջոցներ կը ստեղծի հայ դերասանի մտաւոր մակարդակը բարձրացնելու և բեղմնաւոր կերպով ծառայելու հայ թատրոնական արուեստին։

Ահա մի գեղեցիկ պսակ Սաթենիկի թարմ շիրմին ձօնված։ Ընկերներ, ձօնենք այդ պսակը։

Դրամարկղի մանրամասն մշակումը թողնում եմ ընտրվելիք մասնաժողովին և միայն մի երկու միջոց կը մատնանշեմ։

1) Թիֆլիսի և Բագուի թատերաշրջանում ծառայող դերասանների ռոճկի 1—2 %-ը յատկացվի այդ ֆոնդին։

2) Թատերաշրջանում տրված ներկայացումների ընդհանուր եկամուտի վրա 2% տուրք դրվի։

3) Գաւառական խմբերի շրջագայութեան ներկայացումների վրա նոյնպէս տուրք դրվի։

4) Թիֆլիսի և Բագուի թատերաշրջանի ընթացքում մէկ-մէկ ներկայացում կամ գեղարուեստական երեկոյթ կազմակերպել ֆոնդի օգտին, և մի շարք երկրորդական աղբիւրներ կարելի է ստեղծել։ Ընկերնե՛ր, այդպիսի փոքրիկ զոհողութեամբ մեծ գործ արած կը լինենք և համեստ արձան կը կերտենք անզուգական գործչի՝ Սաթենիկ Ադամեանի թարմ շիրմի վրա։

Օ՜ն անդր առաջ… Միութիւնը առաջադիմութիւն է։

Դերասան Ազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր, ամսիս 26-ին, Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը Սիօնի տաճարում կը կատարի հանդիսաւոր պատարագ, որից յետոյ էկզարխի գլխաւորութեամբ տեղի կունենայ հանդիսաւոր թափօր դէպի Երևանեան հրապարակը, ուր կը լինի գոհաբանական մաղթանք. ապա թափօրը կուղղվի դէպի Ալէքսանդր-Նևսկիի զինուորական տաճարը և Քաշվէթի ու Դիդուբէի եկեղեցիները։ Վերջին եկեղեցում նոյնպէս էկզարխը կը կատարի մաղթանք։

◆ Այսօր, կիրակի, Վանքի եկեղեցում, Թիֆլիսում եղած դերասանների նախաձեռնութեամբ, կը կատարվի հոգեհանգիստ նորերս հանգուցեալ դերասանուհի Սաթենիկ Ադամեանի յիշատակին։

◆ Նահանգապետը առաջարկել է քաղ. վարչութեանը՝ անմիջական ուշադրութիւն դարձնել փողոցների մաքրութեան վրա։

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը երեք շաբաթ ժամանակով մեկնում է հանքային ջրերը հանգստանալու։ Նրա պարտականութիւնները քաղաքագլխի պաշտօնի վերաբերեալ և քաղաքների միութեան կովկասեան ճիւղի վերաբերեալ՝ կատարելու է իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը։

◆ Թիֆլիսում, յուլիսի 23 ին, վախճանվեց շուշեցի Եսայի կամ Իսաջան-բէկ Թունիբէկեանը։ Հանգուցեալը անզաւակ էր և եղբայրն էր հանգուցեալ Անդրէաս Թունիբէկեանի, որ մի քանի տարի առաջ Թիֆլիսում իր ունեցած տունը կտակեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան՝ չքաւոր հարսնացուներին օժիտ տալու համար։ Նորոգ հանգուցեալ Եսային, որ բաւական մեծ հարստութեան տէր էր, ինչպէս ասում են, թողել է մի կտակ, որով իր հարստութեան մեծ մասը յատկացրել է բարեգործական նպատակների։

◆ Փօթիից Թիֆլիս է եկել մի պատգամաւորութիւն, գլխաւորութեամբ Փօթիի քաղաքագլխի, որը ներկայանալով Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ խնդրել է նրան Փօթիի դպրոցները, որոնք այժմ գտնվում են Քութայիսում, տեղափոխել Փօթի։ Նոյն այդ խնդրիքով նրանք դիմել են Կովկասի զինուորական շրջանի պետ գեն.-լէյտ. Վօլսկիին։ Թէ վերջինս և թէ հոգաբարձուն համակրութեամբ են ընդունել պատգամաւորութեան միջնորդութիւնը։

◆ Յետագայ քառամեակի համար քաղ. դումայի իրաւասուներ ընտրողների ընտրական ցուցակը քաղ. վարչութիւնը յանձնել է տպագրութեան։ Ցուցակները կազմված են ըստ ընտրող թաղամասերի։

◆ Քաղաքում հետզհետէ բարձրանում է սառոյցի գինը։ Արհեստական սառոյցի (բնական արդէն չը կայ) պուտը ծախվում է 1 ր. 20 կ.—1 ր. 70 կոպէկ, իսկ ֆունտով՝ 5 կ. փունտը։ Մինչդեռ քաղ. սպանդանոցին կից եղած սառցարանները սառոյցի մեծ պաշար ունեն, և սառոյց շինող մեքենաները իւրաքանչիւր օր շինում են աւելի սառոյց, քան պէտք է քաղ. հիմնարկութիւնների, սանիտարական կնացքների, հիւանդանոցների ու լազարէթների համար։ Սառոյցը տեղում (սպանդանոցում) ծախվում է 40 կ. պուդը։ Սպանդանոցը, ի հարկէ, կարող է սառոյց մատակարարել և ազգաբնակութեան, եթէ նա ունենայ տեղափոխիչ միջոցներ. իսկ փոքր քանակութեան սառոյց գնելու համար քաղաքացիները անկարող են կտրել այդքան տարածութիւն։ Լաւ կը լինէր, որ քաղ. վարչութիւնը իր վրա վերցնէր ազգաբնակութեանը սառոյց մատակարարելու գործը։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

174. 0—36 (հ. կ.)

ПРИ ГОНОРРЕѢ

въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ

„АРМАТИНЪ“ А. Я. АКУЛІАНЦА

для внутренняго употребленія. „Арматинъ“ совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина“ не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ“ А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ“ только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

ԴԵՐՁԱԿՆԵՐԻՆ

Չրիտրար ուղարկում եմ ձեռնարկ, թէ ինչպէս կատարելագործել և ընդարձակել գործը։ Մի խնայէք 3 կոպէկը։ Գրէք ձեր հասցէն, նոյնպէս և ձեր ծանօթների հասցէները։ Մեր հասցէն՝ Рига «Посредникъ для портныхъ» 355.
(կ.) 344. 10—9

ԾԱԽՎՈՒՄ Է

պատահաբար կանացի մետաքսէ մոխրագոյն

ԿՕՍՏԻՒՄ

Միխայլովսկի պր. № 95.
(կ) 488. 2—2

Վաճառված է ԵՐԿՈՒ միլիօն բանկայից աւելի.

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ
Է ՏԱԼԻՍ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ԿԱՆԱՑԻ ԵՐԵՍՆԵՐԻՆ
ԿՐԷՄ ԿԱԶԻՄԻ
ՄԵՏԱՄՈՐՖՕԶԱՆ

Արմատապէս հեռացնում է բծիկները, բշտիկները, մուները, կնճիռները, այրուածքները և այլ դէֆէկտներ։

CRÈME METAMORPHOSA CAZIMI
Cazimi
Հաստ. Եռ. և Մ. Դեպ-ից, № 583

(կ.) Гр. 28187. 464. 3—2

Harutiun Shekerjian

Մի նոր ձեռնարկ ՀԻՊՆՈՏԻԶՄ ԵՒ
ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ.
Լոյս տեսաւ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ
«Մարդկային մտքի բաչագործութիւնը կամ գործնական հոգեբանութիւն» ձեռնարկը։

Այս նոր ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կարող է սովորել հիպնոզացնել. ներշնչել և սովորել նոր հոգեբանութիւն, և գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր ձեռնարկի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հասցէով Ռուսաստանից—Сусаннѣ Шекерджянъ, Вельяминовская ул № 22, Тифлисъ. Արտասահմանից—Sousanna Shekerjian, 22 Weliaminovskaya, Tiflis Caucasus, Russia.
(կ.) 106. 25—21

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուխումի ծխական դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ,
ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ,
(ռուսերէն և թւաբանութիւն)
և երգեցողութեան
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,
որը պէտք է կազմէ քառաձայն երգեցիկ խումբ (պատարագ և համերգ)։
Պահանջվում է փորձառութիւն։
Դիմել՝ Сухумъ, Попечительству Арм. школы.
(հ. կ.) 489. 3—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թւից)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
Դասընթացքը 4 ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։

Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատանը—Թիֆլիս, Նիկօլայէվսկայա փողոց, № 22. Տէլ. № 7—44.
(հ. կ.) 487. 0—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տէլ. № 9—76.)

Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։
(կ. ե. հ.) 480. 0—4

ԹԻՖԼԻՍԻ I ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՎԵՐԱՏԵՍՈՒՉԸ սրանով յայտարարում է, որ վերաքննութիւնները տեղի կունենան օգոստոս ամսի հետևեալ օրերը.

20 ին.—Ռուսաց լեզու (գրաւոր) 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դաս., թւաբանութիւն պատրաստական, 1, 2 րդ և 3-րդ դաս.։
21-ին.—Ռուսաց լեզու (բանաւոր և գրաւոր) պատրաստական դասար., մաթեմատիկա (գրաւոր) 5-րդ, 6-րդ և 7-րդ դաս., գերմաներէն՝ 1, 2 րդ, 3-րդ և 4-րդ դաս.։
22-ին.—Ռուսաց լեզու (բանաւոր) 4-րդ, 5-րդ, 6 րդ և 7-րդ դաս., մաթեմատիկա (բանաւոր և գրաւոր) 3-րդ, 4-րդ դասար.։
24-ին.—Ռուսաց լեզու (բան. և գր.) 1, 2-րդ և 3-րդ դաս., գերմաներէն՝ 5-րդ, 6 րդ և 7-րդ դաս., աշխարհագրութիւն, պատմութիւն և բնագիտութիւն բոլոր դասարաններում։
25-ին.—Ֆրանսերէն՝ բոլոր դասար., ֆիզիքա և մաթեմատիկա (բան.) 5-րդ, 6-րդ և 7-րդ դասար.։
26 ին.—Կրօն և տեղական լեզուներ՝ բոլոր դասարան., մասնագիտական առարկաներ 5-րդ, 6-րդ և 7-րդ դասար.։

Ընդունելութեան քննութիւնները պատրաստական և I, II դասարանները մտնելու համար տեղի կունենան՝ բոլոր առարկաներից օգոստոսի 27 ին և 28-ին։ Իսկ միւս դասարանների համար՝ վերաքննութիւնների օրերը։ VI, VII և VIII դասար. ընդունելութիւններ չեն լինի։ Պատրաստական դասարանի ստորին (այբուբեն.) բաժանմունքը մտնելու համար ընդունվում են 7—8 տարեկան երեխաներ առանց քննութեան։

Քննութիւնների սկիզբը առաւօտեան 8½ ժամին։ Մաղթանքը և պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 8½-ին։ 491. 1—1

15 ԿՈՊԷԿ

քառ. սաժէնը, Թօխլիաուրի գիւղից 2 վ. հեռ. վրա, 2674 ֆ. ծովի մակերևոյթից բարձր, ծախվում է անտառամաս (սոսի, կաղնի, հաճարի, բոխի և այլն ծառերից բաղկացած) ամարավայրի համար։ Անտառամասի տարածութիւնն է 250 ք. սաժ. և աւելի։ Ունեցած ծախքերը կը ծածկվեն պատրաստված փայտից, իսկ գետինը կը մնայ գնողին համարեա ձրի։ Ծախվում են նոյնպէս քառ. սաժ. 15 կոպ. հողամասեր, բաղկացած 900 և աւելի քառ. սաժ., ընկերական պայմաններով այգի ձգելու համար։ Հողամասն ունի առատ ջուր և գտնվում է Սագարէջօ կայար. (Կախէթեան երկ.) 5 վ. հեռ., իսկ Թօխլիաուրսկի պլատֆօրմայից 2 վ. հեռ. վրա։ Կօջօրում, պօստային կայարանի մօտ, վերին խճուղու վրա ծախվում են ամարանոցի վայրեր՝ 300—1000 ք. սաժ.։ Տեղեկանալ՝ I Тумановская ул. № 13, Бухгалтерскіе курсы Теръ-Степанова. 460. 10—6



Բոլոր հայ գրախանութներում վաճառվում են ծխական և պետական դպրոցների համար իմ կազմած

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐԵՐԸ

Ա., Բ., Գ., Դ. տարիներ, Հին-Ուխտ, Նոր-Ուխտ և Գործք-Առաքելոց)։ Ստանալ ցանկացողները կարող են դիմել՝ 1) ինձ—Бебутовская 52 և 2) «Գիրք» գրավաճառանոցին։
Զեղչ 25%։
ՍԱՀԱԿ ա.-ք. ՍԱՀԱԿԵԱՆ
(կ.) 324. 12—11

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնովօդսկայա փ. ստ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՈԼՈՄՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հորիզոնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսը է մի ժամում ամեն մի ոյժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբիններ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur
(հ. կ.) 551. 150—117

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.